ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1955 Общественные науки

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բեռնս ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին և ապա դրան հաջորդող ռեակցիայի ժամանակաշրջանում հայ իրականության մեջ ստեղծվում է մարքս-լենինյան գրականագիտության ստեղծագործական կիրառման տրադիցիա, որն այնուհետև շարունակվում և առանց ընդհատումների հասցվում է մինչև սովետական օրերը։ Այդ տրադիցիայի հիմնադիրների՝ Ստեփան Շահումյանի և Սուրեն Սպանդարյանի գրական-քննադատական գործունեության ելակետը գրականությունը, գրական հարցերն ու երևույթները ժողովրդի կյանքի և պայքարի ամենակենսական խնդիրներին ծառայեցնելու սկզբունքն էր, որը և դառնում է հայ բոլշևիկյան գրականագիտության առաջատար սկզբունքը՝ նրա զարգացման հետագա ճանապարհին։

Այս արժանիքով էլ հենց ամենից առաջ գնահատելի են նախառևոլյուցիոն հայ բոլշևիկյան գրականագիտության անվանի ներկայացուցիչ Արտաշես Կարինյանի գրական ակնարկները՝ գրված նախառևոլյուցիոն և սովետական տարիներին, որոնց մի մասը առանձին գրքով վերջերս հրատարակել է Հայպետհրատը[1]։ Արտաշես Կարինյանի ակնարկներում գրական երևույթները մատուցվում են կապված ժողովրդին հուզող խնդիրների հետ, ըստ որում այնքան սերտ է այդ կապը, որ նրա այս կամ այն ակնարկով կարելի է բնութագրել մեր ժողովրդի պատմության տարբեր հատվածները՝ նրանց ամենաբնորոշ կողմերով, հասարակական հիմնական տրամադրություններով և տենդենցներով։

Այս տեսակետից չափազանց բնորոշ է 1914 թվականին բոլշևիկյան «Պրավդայում» հրապարակված Արտ. Կարինյանի «Ռեալիզմի վերածնունդը» ակնարկը։ Պարզաբանելով ռեակցիայի տարիների անկումայնության համաճարակին հաջորդող գրական վերելքը, շրջադարձը գրականության մեջ միստիկայի և պոռնոգրաֆիայի ոլորտից դեպի «կոպիտ իրականությունը», բոլշևիկ գրականագետը քննարկում և մատնանշում է այդ շրջադարձի հասարակական շարժառիթները, ներկայացնում ժամանակի հասարակական կյանքը՝ իր որոշակի տեղաշարժով՝ ռեակցիայից դեպի ռևոլյուցիան, բանվոր դասակարգի գարթոնքը ռեակցիայի տարիների ժամանակավոր նահանջից հետո։

Հեղինակի նպատակն է ցույց տալ, որ եթե ցինիզմի ու միստիցիզմի գրական քարոզը, ինտելիգենտական արհամարհանքը իրական կյանքի նկատմամբ՝ հասարակական ճահճացման արդյունք էր, ռեալիզմը՝ սկսվող ռևոլյուցիոն վերելքի արտահայտություն էր, որն օժանդակում էր մասսաներին, մասնավորապես դեմոկրատորեն տրամադրված ինտելիգենցիային՝ կողմնորոշվելու դեպի բանվոր դասակարգը։ Նրա ռևոլյուցիոն խնդիրները «... Պլ. դեկադենտները,— գրում է Կարինյանը,— կռվի են ելնում վերակենդանացող ռեալիզմի դեմ, որովհետև գիտեն, որ ռեալիզմը բանվորական շարժման ուժի արտացոլումն է։ Դրանք զգում են, որ իրենց գազրելի «ստեղծագործվող լեղենդը» մարում և անհետանում է պրոլետարիատի ստեղծագործվող կյանքի հանդեպ...»։

Գրականության պարտականության հետևողական գիրքերից բոլշևիկ գրականագետը բուրժուական անկումային կուլտուրան սահմանագատում է ժողովրդի ռեալիստական կուլտուրայից, հաստատում ռեալիզմի ուժն ու կենսունակությունը՝ բանվորական շարժման հեռանկարների, պատմական առաջընթաց զարգացման անխուսափելիության տեսակետից։

Իր բարձրացրած գրական-հասարակական հարցերով «Ռեալիզմի վերածնունդը» ակնարկը օրգանապես առնչվում է նույն 1914 թվականին դարձյալ «Պրավդայում» հրապարակված նրա մյուս «Մաքսիմ Գորկու «Հեքիաթներ»-ը վերնագիրը կրող ակնարկի հետ։ «Ռեալիզմի վերածնունդը» ակնարկում բնութագրվում է անկումային գրականությունը՝ որպես «քաղցրավուն լեղենդների» կամ «ճղճիմ ստորությունների ու մանր անբարոյականության» գրականություն, որպես ձգտում՝ դունաղարդելու անասնականը, անմարդկայինը կյանքում և մարդու մեջ։

---

[1] Արտ. Կարինյան. Գրական արձագանքներ, Հայպետհրատ, 1955։

«Մաքսիմ Գորկու «Հերիաթներ»-ը ակնարկում, պրոլետարիատի մեծ դեղադետին հակադրելով անկումային ինտելիգենցիային, Կարինյանը վեր է հանում Գորկու ստեղծագործության կենսահաստատ էությունը, բացահայտում նրա սերտ կապը ժողովրդի, ժողովրդական կենսահայեցողության հետ։ Գորկու իտալական հերիաթների նյութի վրա գրված ակնարկում հիմնավորվում է էսթետիկական այն ըմբռնումը, ըստ որի դեղեցիկը արվեստի մեջ՝ կյանքն է իր անխուսափելի առաջընթացով, մարդու ստեղծագործ աշխատանքով, աշխատավոր մարդու հոգևոր և բարոյական վեհությամբ։ Գորկու համար, նշում է Արտ. Կարինյանը, իրական կյանքը հմայիչ է ու լի պոեզիայով, և ապա, անդրադառնալով այդ պոեզիայի ակունքներին, ընդգծում է, որ նրա կրողը ժողովուրդն է՝ իր կյանքով և աշխատանքով, երջանկության անկաշկանդ որոնումներով։ «Հերիաթների հիմնական և գլխավոր հերոսը նա է,— գրում է ակնարկի հեղինակը,— ով իր հարուստ կյանքով և բոլոր ձգտումներով նկարագրվում է կյանքի իրականությունը հերիաթային ճառագայթներով՝ ժողովուրդը։ Գորկին միայն ժողովրդի մասին է խոսում և պատմում»։

Կարինյանի համոզմունքով Գորկու ստեղծագործության ուժն այն է, որ աշխատավորների ծանր գրության պատկերման հետ միասին՝ նա բացահայտում է նրանց ուժն ու ձգտումները, ստեղծում ժողովրդական կյանքի և կենցաղի իրական դունեղ պատկերներ, խորը լավատեսությամբ օժտված մարդկանց համակիչ կերպարներ։ Ի հակադրություն անկումային գրականության Գորկու հերիաթների աշխատավոր հերոսները «ներքրող են ձոնում կյանքին ու կյանքի գեղեցկությանը»։ Խորապես ճշմարտացի է այն ընդհանրացումը, թե իտալական հերիաթներով «Գորկին կարծես փորձում է կերտել ժամանակակից հասարակության մեջ նոր կյանքի համար մարտնչող «նոր մարդկանց» հոգեբանության առանձնահատուկ և ընորոշ հատկանիշները...»։ Կարինյանը ակնարկում է Գորկու նվիրվածությունը բանվոր դասակարգի ազատագրական պայքարին, արձանագրում այն փաստը, որ նրա ստեղծագործությունը մարդկությանը բերում է նոր գաղափարներ, նոր բնավորություններ և աշխարհըմբռնում, նշանավորելով նոր էտապ՝ մարդկության գեղարվեստական զարգացման պատմության մեջ։

«Մաքսիմ Գորկու «Հերիաթներ»-ը ակնարկը Գորկու ստեղծագործության պաշտպանություն է. այն ուղղված է բուրժուական ինտելիգենցիայի դեմ, որը հետևողականորեն անվանարկում էր Գորկուն, ոտնձգություններ կատարում նրա ստեղծագործության նկատմամբ։ Հանուն Գորկու պաշտպանության՝ բոլշևիկների մղած պայքարը, որ տրադիցիոն բնույթ էր ստացել դեռևս 1905 թվականի ռևոլյուցիայի օրերից, հետագայում՝ 1941 թվականին ականատեսի և մասնակցի ողջ կրքով Արտ. Կարինյանը վերարտադրում է «Մաքսիմ Գորկի» ընդարձակ ակնարկում։

Ներկայացնելով քաղաքական-պարտիական պայքարը Գորկու շուրջը, Կարինյանն իր այս ակնարկում գծագրում է Գորկու՝ որպես մեծ դեղադետի և քաղաքացու դիմանկարը, որն իր որոշ սայթաքումներով հանդերձ, մշտապես եղել է ժողովրդի հետ, հետևողականորեն կանգնած է եղել մարդկության պրոգրեսի, մարդկային արդար հարաբերությունների պաշտպանության դիրքերում։

Հասարակական-քաղաքական պայքարի նմանօրինակ ֆոնի վրա են ներկայացնում «Գրական արձագանքներ» ժողովածուում տեղավորված ակնարկներում Ռադիշչևը, Պուշկինը, Գոգոլը, Չերնիշևսկին, Նեկրասովը, Ռոմեն Ռոլանը, ռուսական և արևմտաեվրոպական գրականության մի շարք այլ ներկայացուցիչներ, որոնց տարբեր առիթներով, բայց և որոշակի նպատակադրությամբ, անդրադարձել է Արտ. Կարինյանը իր գրական-քննադատական գործունեության երկարամյա ճանապարհին։ Ըստ որում գրողի ստեղծագործական-հասարակական դիմանկարը ներկայացնելիս՝ ամենուրեք և բոլոր դեպքերում Կարինյանը օգտագործում է գրական-բանասիրական, արխիվային-պատմական ամենավերջին նորույթներ, և տեղեկություններ, որոնք հետաքրքրական և ուսանելի են դարձնում նրա ակնարկները ինչպես լայն հասարակայնության, նույնպես և մասնագետ գրականագետների, բանասերների ու պատմաբանների համար։

Լայնորեն քննարկելով այն իրադարձությունները, որոնց ոլորտում ձևավորվում և ընթանում է գրողի ստեղծագործական կյանքը, Կարինյանը՝ հավատարիմ նախահեղափոխական տարիների գրական աշխատանքի իր սկզբունքներին, օգնում է ընթերցող հասարակայնությանը՝ որոշելու գրողի ստեղծագործության հասարակական նախադրյալներն ու շարժառիթները, նրա էությունը, ոգին, այդ փաստերի հիման վրա ճիշտ կողմնորոշվելու գրողի կամ նրա առանձին ստեղծագործության նկատմամբ։ Կարինյանի գրականագիտա-

կան ելակետով՝ դրոդի մասին ամեն մի խոսք, գրական յուրաքանչյուր երկի մեկնաբանություն անպայմանորեն կոչված է ծառայելու դաղափարական որոշակի նպատակի, օժանդակելու համաժողովրդական մեծ խնդիրների իրականացման գործին։

Այս իմաստով, եթե նախառևոլյուցիոն տարիների նրա դրական ակնարկները ծառայել են ախատավոր մասսաներին՝ ցարիզմի և բուրժուական հարաբերությունների տապալման, նոր հասարակություն ստեղծելու գիտակցությամբ դաստիարակելու գործին, սովետական տարիներին գրված ակնարկներում Ռադիշչևի, Պուշկինի, Գոգոլի, Նեկրասովի և մյուսների ազատասիրական և ժողովրդասիրական իդեաների մեկնաբանությունը ուղղված է սովետական ժողովրդին՝ հայրենասիրական մեծ խնդիրների և նախաձեռնությունների շուրջը համախմբելու, մոբիլիզացնելու նպատակին։

«Գրական արձագանքներ» ժողովածուն արժեքավոր ներդրում է սովետահայ գրականության մեջ և արժանի է լուրջ ուշադրության։

Ա. ՉԱՔԱՐՅԱՆ